



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 29127  
Դեկտեմբեր 8, 1985

Արժանաշնորհ  
Տ. Վահրամ Քննյ. Հազարեան  
Առժամեայ Հովիւ  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Շիգակօ.


Սիրելի Տէր Վահրամ,

Այսու գիրով կը յայտնենք որ համայնքիդ պատգամաւորին պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն կատարէք նոր պատգամաւորի եւ անոր անձնափոխանորդին համար, թեմական կանոնադրութեան 14-4 եւ 54 յօդուածներուն համաձայն, եւ 1984 տարուան համայնքիդ տեղեկագրին մէջ արձանագրուած տրատու անդամներու թիւին հիման վրայ:

Կը յանձնարարենք որ ձեր նորընտիր պատգամաւորին անունը եւ հասցէն Առաջնորդարան ղրկէք ամենէն ուշը մինչեւ Փետրուար 15, 1986, որպէս զի կարելի ըլլայ հրահրել զինք թեմական Պատգամաւորական ժողովին, որ տեղի պիտի ունենայ Մայիս 1-3, 1986, Հինգշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը՝ հիւրընկալութեամբ Ռէյսին Ուիսքանսընի Ս. Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ:

Կը թելադրենք որ նորընտիր պատգամաւորին ինքնութիւնը հաստատող վկայագիրը Հոգեւոր Հովիւին, ծխական խորհուրդի Ատենապետին եւ Ատենադրպիրին կողմէ ստորագրուած՝ Առաջնորդարան ղրկէք համայնքիդ Անդամական ժողովին տեղեկագիրներուն հետ:

Կը ներփակենք Առաջնորդարան ղրկուելիք վկայագիրին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով օրինակը՝ որպէս նմոյշ:

Սիրոյ ողջունիւ  
  
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Քուական

Այսու գիրով կը հաստատենք որ Տիար Կամ Տիկին -----  
հաւատաւոր անդամ է մեր Եկեղեցւոյ եւ ----- 1986-ին  
գումարուած Տարեկան Անդամական ժողովի ընթացքին ընտրուած է թեմական  
պատգամաւոր:

-----  
Ժխական Խորհուրդի  
Ատենադպիր

-----  
Ժխական Խորհուրդի  
Ատենապետ

-----  
Հոգեւոր Հովիւ

Date

-----  
This is to certify that \_\_\_\_\_ is a member in good  
standing of the \_\_\_\_\_ Armenian Church; and  
was duly elected a Diocesan Delegate by the General Assembly on  
\_\_\_\_\_.

-----  
Parish Council Secretary

-----  
Parish Council Chairman

-----  
Parish Priest



ԱՐՄԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

*Archbishop Torkom Manoogian, Primate*

TRANSLATION OF A LETTER SENT BY HIS EMINENCE  
ARCHBISHOP TORKOM MANOOGIAN REGARDING THE ELECTION OF DELEGATES

Dear .....

The term of the Diocesan delegate(s) of your parish has expired, and it is necessary for you to hold an election both for delegates and alternates, according to articles 14-C and 54 of the Diocesan Bylaws.

We urge that the names and addresses of your newly elected delegates and alternates be sent to the Diocesan Office not later than February 15, 1986 so that we may be able to send them formal invitations to our annual Diocesan Assembly which will be held on May 1-3, 1986. The host parish is the St. Mesrob Armenian Church of Racine, Wisconsin.

Certification of the election of your delegates, signed by the pastor, and the chairman and secretary of the parish council, should be sent to the Diocesan Headquarters for confirmation.

We enclose herewith a copy of the certificate to be mailed to the Diocese in the Armenian and English languages.

Prayerfully,

Archbishop Torkom Manoogian  
Primate

December 9, 1985